ՀՈԴՎԱԾՆԵՐ С Т А Т Ь И

ԱՆԴՐԱՆԻԿԸ ՈՐՊԵՍ ՄԱՐՏԻԿ ԵՎ ՋՈՐԱՎԱՐ

(Մեծդյան 100-ամյակի առթիվ)

Դվաբդիայի գեղապետ Ս. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկ Թորոսի Օզանյանը, որին ժամանակակիցներն անվանել են «Հայոց Բարիբալդի», ծնվել է 1865 թ. փետրվարի 13-ին, Արևմտյան Հայաստանի Շապին-Կարահիսար գյուղաքաղաքում, արհեստավորի ընտանիքում։ Այստեղ էլ անցնում են նրա մանկության ու պատանեկության տարիները։ Անդրանիկը իր կրթությունն ստացել է հայրենի գյուղաքաղաքի Մուշեղյան վարժարանում։

Վաղ հասակից Անդրանիկն ականատես է լինում թուրքական բռնակալական ռեժիմի պայմաններում հայերի նկատմամբ գործադրվող անլուր կամայականություններին ու դաժան, անմարդկային հալածանքներին։ Եվ աստիճանաբար նրա մեջ արմատավորվում է ատելության, անհաշտության զգացումը սուլթանական արյունոտ բռնակալության դեմ։

Անդրանիկը շատ վաղ կորցրեց մորը։ Որոշ ժամանակ անց տեղի թուրք զորքերից մեկը հարձակվում է Անդրանիկի հոր վրա և ծանր վերք հասցնում նրան։ Այս դեպքը խոր վիշտ է պատճառում կրակոտ, պատվասեր պատանուն։ Անդրանիկը վրեժխնդիր է լինում հոր համար և դատաստան տեսնելով նրան սպանելու փորձ անողի հետ, 1883 թ. փախչում է իր ծննդավայրից։

Գալով Կ. Պոլիս, Անդրանիկը հյուսնություն է սովորում, աշխատում է այդ արհեստով և ականատեսների վկայությամբ՝ վատ վարպետ չէր։ Այստեղ նա կապ է հաստատում սուլթանական բռնապետության դեմ ըմբոստացած հայերի հետ. մասնակցում Կ. Պոլսի ոստիկանապետ Յուսուպ Մեհմեդ բեյի սպանությանը, որը տեղի ունեցավ 1892 թ. փետրվարի 9-ին։ Անդրանիկն սկսում է ծպտված կյանք վարել։ Որոշ ժամանակ անց նա գալիս է Սասուն։ Սակայն թուրքական իշխանությունների հետապնդումները ստիպում են Անդրանիկին լքել Կովկասի ճանապարհը. 1893 թ. հունվարի 20-ին նա հասնում է Բաթումի, որտեղից փորձում է անցնել Կարս, բայց ձերբակալվում է սահմանապահների կողմից և բանտ նետվում։ Փախչելով բանտից, մայիս ամսին հասնում է Մուշ, Տարոն։ Այստեղ նա մասնակցում է թուրքական հրոսակախմբերի հետ ապստամբ հայերի ունեցած մի շարք ընդհարումների։

Ավելի քան մեկ տարի Տարոնում ապաստանվելուց հետո, 1894 թ. վերջերին Անդրանիկը նորից ստիպված է լինում թողնել հայրենի երկիրը։ Հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ ու վտանգներ, նա ի վերջո հասնում է Սեվաստոպոլ, ուր ապրում և աշխատում է մոտ երկու տարի։ Այնուհետև մի շարք շրջագայություններ է կատարում Կովկասում և Արևմտյան Հայաստանում։ Կարիճ ֆիդայիների իր խմբով Անդրանիկը բազմիցս գինված ընդհարումներ է ունենում թուրք հրոսակախմբերի հետ՝ ցուցաբերելով անօրինակ խիզախություն։ Շուտով նրա անունն ու համբավը տարածվում են ամենուրեք. ամբողջ Թուրքիայում հազար ու մի լեգենդներ են հյուսվում նրա քաջագործությունների մասին։

Թուրքական իշխանությունները կատաղի ու համառ կերպով հետապնդում. որոնում էին Անդրանիկին և նրա զինակիցներին։ 1901 թ. իր փոքրաթիվ խմբով Անդրանիկը պատսպարվում է Մուշի շրջանի Առաքելոց վանքում։ Շուտով եվրոպական մամուլը ստիպված եղավ խոսել այստեղ դիրքավորված հայ ապրստամբների և նրանց ղեկավար Անդրանիկի քաջագործությունների մասին։ 1903 թ. Անդրանիկը հերոսական Սասունում է։ Հաջորդ երկու տարում նա նոր սխրագործություններ է կատարում Աղթամարի ու Վանի Վարագա վանքերում։

1905 թ. Անդրանիկը դալիս է Թիֆլիս՝ հյուրընկալվելով Հովհ. Թումանյանի կողմից։ Հայ մեծ բանաստեղծը անջնջելի տպավորություն է թողնում քաջակորով մարտիկի վրա։ Շուտով Անդրանիկը այստեղից մեկնում է Փարիզ. լինում է Ժնևում, ապա անցնում Բուլղարիա, որտեղ և բնակություն է հաստատում՝ սկսած 1907 թ.։

1912—1913 թթ. Անդրանիկը բուլղարական բանակի շարքերում հայկական վաշտի դլուխ անցած՝ մասնակցում է Բալկանյան պատերազմին և Թուրքերի դեմ մղած հերոսական մարտերում մեծ փառքի է հասնում։

1914 թ. Անդրանիկը կռվում է Կովկասյան ռազմաճակատում. առաջնորդելով հայ կամավորներին՝ ռուսական բանակի կազմում. նա չգերազանցված քաջագործություններ է կատարում Թուրքիայի դեմ մղված կռիվներում։ 1917 թ. նրան տրվում է գեներալ-մայորի աստիճան։

1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին Անդրանիկը վարելով առանձին. հայկական զորամասի հրամանատարի պաշտոնը մասնակցում է թուրքական զորքերի դեմ մղված մի շարք ճակատամարտերի։

1918 թ. ամռանը Անդրանիկը իր զորամասով Նախիջևանում էր։ Այստեղից նա 1918 թ. հուլիսի 14-ին Ս. Շահումյանին հեռագրով հայտնում է, որ իր զորամասով անցնում է Սովետական Ռուսաստանի տրամադրության տակ և Նախիջևանը հայտարարում է Ռուսաստանի անբաժան մասը։ Թուրքական գերակշռող զորամասերի հարձակման սպառնալիքի տակ 1918 թ. հուլիսի վերջերին Անդրանիկը նահանջում է դեպի Զանգեզուր, ուր մնում է 1918 թ. օգոստոսից մինչև 1919 թ. մարտ ամիսը։ Իր զորամասով նա լինում է Տաթևում (օգոստոսի 2-ին), Գորիսում (օգոստոսի 4-ին), Ղափանում, Սիսիանում։ Այս շրջանում ավելի է խորանում Անդրանիկի և դաշնակցական կառավարության միջև առաջացած տարաձայնությունը, որի հետևանքով 1919 թ. մարտի 23-ին, նա Զանգեզուրից Դարալագյազի վրայով և Դավալուով, առանց Երևան մտնելու, հասնում է Էջմիածին, գնդերը հանձնում կաթողիկոսին և ճանապարհվում դեպի Թիֆլիս։ Այստեղ մի քանի օր Հ. Թումանյանի մոտ հյուրընկալվելուց հետո, Բաթումիի վրայով մեկնում է արտասահման՝ լինում է Մանչեստրում (ապրիլի 24-ին), Փարիզում (1922 թ. հունիսին), այնուհետև տեղափոխվում է ԱՄՆ՝ Նյու-Յորք, Բոստոն, Ֆրեզնո։

Անդրանիկը վախճանվեց 1927 թ. օգոստոսի 31-ին Կալիֆորնիայում, թաղվեց Ֆրեզնոյում։ 1928 թ. նրա աճյունը Ֆրեզնոյից փոխադրվեց Փարիզ և հողին հանձնվեց Պեր-լա-Շեզ գերեզմանատանը։

* *

«Քաջ Անդրանիկ»— այսպես էին կոչում նրան ժամանակակիցները, իր զինակիցները, հայ ժողովրդի ամենալայն խավերը։ Այս գնահատականը իր արտահայտությունը գտավ նաև «Известия» թերթի էջերում։ Գոհունակությամբ

նշելով այն փաստը, որ Անդրանիկն իր զորամասով պատրաստակամություն է հայտնել անցնելու Սովետական Ռուսաստանի կառավարության տրամադրության տակ, «Իզվեստիա»-ն նշում էր նրա բացառիկ ժողովրդականությունը և բուռն արժանվույն գնահատում նրա ռազմական տաղանդը։ «Անդրանիկը Թուրքիայում հայերի ապստամբության կազմակերպիչներից մեկն է... համբավավոր մի հերոս, որ մեծ հեղինակություն է վայելում ժողովրդական զանգվածների մեջ։ Ժողովրդին նա հայտնի է «Քաջ Անդրանիկ» մականունով։ Նրա մասին հորինվել են մի քանի ժողովրդական երգեր, որոնցում փառաբանվում է նրա հերոսությունը։ Նա մարտական մեծ փորձ ունեցող մարդ է, հեղինակավոր անձանց կարծիքով Անդրանիկը օժտված է ստրատեգիական խոշոր տաղանդով»[1]։



1 «Известия», [illegible], 1918, № 155 (419).

Անդրանիկին մոտիկից ճանաչողներից մեկը գրել է, որ նրան բնութագրող գլխավոր գծերն են. — «1. Խիզախություն և անձնական քաջություն, 2. Խստապահանջություն թե իր և թե ուրիշներու հանդեպ, 3. Արդարասեր, անկաշառ և մաքուր նկարագիր. 4. Ազնիվ սիրտ, թույլերու, տկարներու պաշտպան կանգնելու պատրաստակամություն, 5. Հնարամտություն ու անօրինակ պատրաստակամություն՝ թե խոսքի և թե գործի մեջ։ Հանգուցյալ զորավարը իր քաջագործություններուն համար պարգևատրված էր Պուլկար Ս. Գեորդի Բ և Գ պատվանշաններով, ռուսական կառավարութենեն՝ Ս. Գեորգի Դ, Բ և Ա պատվանշաններով, ֆրանսիական կառավարութենեն՝ Պատվո լեգեոնի ասպետության պատվոնշանով, իսկ վեհափառ կաթողիկոսի կողմե ալ Վարդան Զորավարի Ա Դարգի շքանշանով։ Հայ ժողովուրդն ալ զինքը վարձատրեց կոչելով Քաջ Անդրանիկ և զայն հավերժացնելով իր սրտի խորքերուն մեջ»։ Ավելացնենք այստեղ, որ Անդրանիկը պարգևատրված էր նաև Հունաստանի կառավարության կողմից «Պատերազմական խաչի 2-րդ աստիճանի» շքանշանով։

Անդրանիկը միայն ռազմական գործիչ չէր։ Նա, չնայած իր մի շարք մոլորություններին, հայ ազգային-ազատագրական շարժման պայծառ դեմքերից մեկն էր։ Նա ջերմ կերպով արձագանքել է հայ ժողովրդին հուզող համարյա բոլոր հարցերին։ Նա բմբոստացել է անարդարության դեմ, պաշտպան է կանգնել ընկածներին ու ընչազուրկներին, հայ որբերին ու տարագիր հայ ընտանիքներին. փորձել է հասկանալ իր շուրջը տիրող քաղաքական-հասարակական բուռն շարժումների. դասակարգային բախումների, ազգային ճնշումների պատճառներն ու էությունը։ Բնատուր սուր խելքը, դիտելու նուրբ կարողությունը. արագ և մեծ մասամբ անսխալ կողմնորոշվելու զարմանալի շնորհքը, ռազմական ուրույն տաղանդը, կազմակերպչական փայլուն ձիրքը, անձնական ասպետական քաջությունը Անդրանիկին միշտ առաջ էին մղում պայքարի, ճակատամարտերի վճռական բնագծերը։

Սակայն մենք սխալված չենք լինի, եթե ասենք, որ Անդրանիկը այնուամենայնիվ առաջին հերթին մարտիկ էր, հայդուկ, պարտիզան, հրամանատար, քաջ զինվորական։ Նա ծնված էր առաջին հերթին մեծ զինվորական, մեծ զորավար դառնալու համար և եթե պայմաններն այնպես են դասավորվել, որ նա կադրային խոշոր զինվորական միավորումների գլուխ չի կանգնել, ապա դրանում նա ոչ մի մեղք չունի։ Այն կոնկրետ ճակատամասում, պայքարի այն տեղամասում, որտեղ իրերի բերումով ինքը նետվել է, նա դրսևորել է իր ընդունակություններն ու տաղանդը և ստիպել մեծ կոչումներ ու բարձր դիրք ունեցող զինվորականներին խոսել իր մասին։ Նման տաղանդները ճակատամարտերում երբեք աննկատ չեն կարող մնալ։ Եվ Անդրանիկին նկատում էին ամենուրեք, ինչպես բարեկամները, այնպես էլ թշնամիները։

Անդրանիկը կադրային բանակի սպա չէր, նա չի անցել ռազմական ուսումնարանների կամ ակադեմիաների դասընթաց, նա միշտ չէ, որ ունեցել է իր անմիջական ու բարձր պետերը։ Այս իսկ պատճառով էլ նրա քաջագործությունները ու խիզախությունները միշտ չէ, որ նկատվում, գրի էին առնվում ու ըստ արժանվույն պաշտոնապես նշվում։ Առանց վարանումի կարելի է ասել, որ Անդրանիկի մարտական գործերի բիչ մասն է, որ գնահատված է հարկ եղած չափով։

---

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 94, թ. 34—35։

Անդրանիկը զինված ընդհարումների և ճակատամարտերի մասնակցել է սկսած 1890-ական թթ. մինչև 1919 թ.։ Մինչև 1912—1913 թթ. Բալկանյան պատերազմը նա որպես մարտիկ կամ հրամանատար հանդես չի եկել կազրային բանակների կազմում, այլ մղել է մոտավորապես պարտիզանական կարգի կռիվներ, գլխավորել է հայ ֆիդայիներից կազմված զինված խմբերը, անհավասար զոտեմարտերի մտել Թուրքական հրոսակախմբերի դեմ, ցուցաբերելով հերոսության ու ռազմական հնարամտության հիասքանչ օրինակներ։

Այդ տեսակետից առանձնապես արժե հիշել և գնահատել Անդրանիկի դերը ժամանակին այնքան աղմուկ հանած «Առաքելոց վանքի կռվի» ժամանակ։ Այդ վանքը ուներ ամուր պարիսպներ և որոշ չափով հարմարեցված էր ինքնապաշտպանության համար։ Երիտասարդ Անդրանիկը պետք է գլխավորեր իր փոքրաթիվ խմբի անհավասար պայքարը Թուրքական կանոնավոր զորքերի դեմ։ Զինված միայն հրացաններով, այն էլ ոչ բոլորը պիտանի իսկական մարտի համար, Անդրանիկի խումբը ձեռնամուխ է լինում վանքի շուրջը խրամատների կառուցմանը։ Դիրքերը փորելու և դասավորելու գործը կատարվում է հմտորեն։ «Մեր թշնամին շվարացնելու և մեր ուժերուն մասին որոշ գաղափար մը չի տալու համար,— գրում է Անդրանիկը,— յուրաքանչյուր զինվորի համար երեք տարբեր դիրքեր շինած էինք։ Պետք էր որ անոնք մեկ դիրքեն զարնեին և մյուսին անցնեին, ընդդիմադիր մեծ ուժի մը գաղափար տալու։ Այդ տարին տակավին մենք ռուսական «Մոսին» չունեինք, 1877-ին գործածած ռուսական պերտանդանիներ էին մեր զինվորներուն ձեռքը գտնվածները, միակ իմս Մոսին-մաուզեր էր»[3]։ Անդրանիկը սահմանում է սննդամթերքի եղած պաշարները խնայողաբար օգտագործելու խիստ կարգ ու կանոն։ Բացի ֆիդայիներից, վանքի ներսում կային նաև մոտ 80 հայ որբեր՝ իրենց խնամակալներով։

Կռիվն սկսվում է 1901 թ. նոյեմբերի 5-ին և տևում մինչև ամսի 27-ը։ Թուրքերը բազմիցս փորձում են զիշերը անցքեր բացել պատերին և ներս խուժել վանք, բայց զգոն ֆիդայիները կանխում են վտանգը՝ ծանր կորուստներ պատճառելով թշնամուն։ Այդ ընդհարումների ժամանակ մի շարք ապստամբներ ընկնում են իսկական հերոսի մահով։ Բառացիկ սրտացավությամբ Անդրանիկը հոգում էր վիրավորների մասին, անձամբ կապում էր շատերի վերքերը։

Ապարդյուն պաշարումներին հաջորդում են «բանակցությունները»։ Թուրքերը ցանկանում են ժամանակ շահելով՝ պաշարվածներին սովամահ անել։ Անդրանիկը հատուկ նամակով Թուրքական կառավարությանն է ներկայացնում իր պահանջները՝ ներում շնորհել հայ բաղաքական հանցավորներին, տասանորդի հավաքումը թողնել գյուղի ներկայացուցիչների վրա, ավազակությամբ զբաղվող քրդերին զինաթափ անել, նրանց կողմից գրաված հայկական գյուղերը վերադարձնել հայերին, մերկացնել և պատժել կաշառակերներին և այլն։ Իր նամակում Անդրանիկը փաստերով մեղադրում է Թուրքիայի կառավարությանը հայ ժողովրդին հասցրած զրկանքների ու խոշտանգումների համար[4]։

Արդեն 20 օր էր, ինչ բազմաքանակ Թուրքական զորքը շրջապատել էր վանքը և ապարդյուն փորձեր էր անում ծնկի բերելու ապստամբներին։ Թշնա-

3 «Առաքելոց վանքի կռիվը», պատմեց զորավար Անդրանիկ, գրի առավ Լ. Կ. Լուլեճյան, Պոսթոն, 1924, էջ 27—28։

4 Նույն տեղում։

մու զինվորների մեջ, որոնք վրա հասնող սառնամանիքներին գտնվում էին բաց դաշտում, նկատվում էին հուսահատական տրամադրություններ ու կարգապահության խախտման բազմաթիվ դեպքեր։ Սուլթանը ամոթանքի ու սպառնալիքի հեղեղ էր թափում պաշարողների պետերի հասցեին։ Նոր թարմ ուժեր ստանալով, թուրքերը պատրաստություններ էին տեսնում վանքի վրա վճռական գրոհ սկսելու համար։ Թշնամուն ապակողմնորոշելու նպատակով Անդրանիկը նրանց լուր էր ուղարկել, որ մտադիր է վանքում մնալ առնվազն 6 ամիս, մինչև որ կառավարությունը կատարի իր պահանջները։ Մինչդեռ զինամթերքի ու պարենի պաշարների խիստ սահմանափակ լինելը, երկար պաշարված մնալու հետ կապված ծանր հեռանկարները, որբերի վիճակը ստիպում էին Անդրանիկին համարձակ որոշում ընդունել. հարկավոր էր թշնամու օղակից ծածուկ դուրս գալ դեպի Արապոյի և Արծվի քարերը, իսկ հետո գնալ ավելի հեռու և ապահով վայրեր։

Մի պահ թվում էր, որ Անդրանիկի ձեռնարկած պլանները ֆանտաստիկ են և անիրագործելի։ Սակայն նա ամեն ինչ նախապատրաստել էր մեծ հնարամտությամբ։ Բոլորին տվին սպիտակ սավաններ ու սպիտակ չալմաներ, որպեսզի ձյունապատ դաշտով անցնելիս աննկատելի մնան։ Հրամայված էր չկրակել հանդիպած թշնամու վրա, այլ «անվնաս դարձնել» նրան միայն դանակով կամ դաշույնով և հատուկ պայմանական նշաններով խումբ-խումբ դուրս գալ վանքից։ Անդրանիկը անձամբ սովորեցնում էր խավարում գործելու եղանակները, չմոռանալով ոչ մի մանրուք։ Վերհիշելով այդ օրերը, նա 1924 թ. գրել է. «Այս բոլոր պատվերները տալե վերջը, խումբը վարժեցնելու համար բակին մեջ փորձեր կատարեցի, տեսնելու թե ըմբռնա՞ծ են ընելիքնին։ Կքալեմ, ծունկ կզարնեմ, ետիս կնայեմ տեսնելու թե բոլոր թելադրություններս կկատարե՞ն իրենց խմբապետներուն հսկողության տակ։ «Տղայք, հասկցա՞ք ձեր կատարելիք պարտականությունը»։ «Այո, փաշա, հասկցած և պատրաստ ենք»[5]։

Երբ ամեն ինչ պատրաստ էր, ֆիդայիները համբուրում են ընկածների գերեզմանները և գործի անցնում։ Առաջինն ինքը՝ Անդրանիկն է շարժվում մի քանի կտրիճների հետ։ Երբ 4—5 քայլ էր մնացել թուրք զինվորների շղթային հասնելուն, լսվում է մի ձայն՝ «Դուք ո՞վ եք»։ Անդրանիկը դիմում է խորամանկության. «Չի ճանչցա՞ր զիս, ես հարյուրապետ Մահմետ էֆենտին եմ, կես ժամ է, որ հոս կխուզարկեմ և դուք կքնանաք»... Եվ իր ասածը հաստատելու համար դիմում է իր ընկեր Գեորգ Զաուշին՝ «Մահմետ Զաուշ, այս մարդը կքնանար, այնպես չէ՞»։ Զաուշը հաստատում է, իսկ թուրք զինվորը այլայլված գիշերային անսովոր հյուրերի հայտնվելուց, աղաչում է, որ ներողամիտ լիներն իր նկատմամբ։ Անդրանիկը՝ «հարյուրապետ Մահմետ էֆենտին» հայտարարում է, որ պատիժը կորոշի վաղը և նշան է անում իր ընկերներին՝ շարժվել որոշված ուղղությամբ։ Երբ հակառակորդը գլխի ընկավ, թե ինչ է տեղի ունեցել արդեն ուշ էր. կտրիճները անցել էին խոր ձորերը, սարերը և դուրս եկել իրենց համար ապահով տեղ։ Ամբողջ աշխարհով մեկ տարածվեց Անդրանիկի խմբի այս արկածային քաջագործության լուրը։ Փոքրաթիվ զորքով հաղթանակ տանել թվական գերակշռություն ունեցող թշմանու դեմ,— այս է եղել Անդրանիկի տակտիկայի առաջին և գլխավոր հատկանշական գիծը։

---

5 Նույն տեղում, էջ 56—57։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Անդրանիկը լրջորեն մտահոգվում էր իր ռազմա-տեսական պատրաստությամբ։ Ավելին. նա ձգտում էր ստեղծել ինչ-որ յուրատեսակ մի սիստեմ, որին հետևելու էին հայկական կամավորական, հայդուկային խմբերը մարտական գործողությունների ժամանակ։ 1906 թ. Ժնևում լույս տեսավ նրա «Մարտական հրահանգներ»[6] ռազմական կանոնագիրքը, որի մեջ ամփոփված են Անդրանիկի խորհուրդները, նկատողություններն ու առաջարկները հայ ֆիդայիների խմբերի գործողության տակտիկայի վերաբերյալ։

Կանոնագիրքը բաղկացած է հետևյալ 15 գլուխներից. 1. Զոն, որ նվիրված է իր զոհված մարտական ընկերների հիշատակին. 2. Զինվորական խորհուրդ. 3. Օժանդակ խմբեր. 4. Խումբը երկրի մեջ. 5. Թռուցիկ խմբեր. 6. Ապստամբություն. 7. Մարտական ընդհանուր հրահանգներ. 8. Զգուշություններ ճանապարհին. 9. Կոիվներու մասին անհրաժեշտ գիտելիքներ. 10. Փախստականներ. 11. Դրամը երկրին մեջ. 12. Գյուղական դատեր. 13. Զենքը երկրին մեջ. 14. Քրդեր և քրդական միություն. 15. Երիտասարդներին։

Հնարավորություն չունենալով մանրամասն շարադրել յուրաքանչյուր գլխի բովանդակությունն ու նշանակությունը, դրանց դրական ու բացասական կողմերը, անհրաժեշտ ենք համարում սահմանափակվել մի քանի նկատողություններով ու նշումներով, որոնք որոշակի գաղափար են տալիս Անդրանիկի զուտ ռազմական կարգի մտածելակերպի և սկզբունքների մասին։

Կանոնագրքում առկա է պարտիզանական պատերազմի բնույթի և էության ճիշտ ըմբռնում, հատուկ ուշադրություն է դարձված պայքարի առավել արդյունավետ մեթոդների, գործողության ձևերի ընտրությանը։ Երևում է, որ հեղինակը լավ է հաշվի առել այն մարդկանց մակարդակը, որոնց համար գրված է կանոնագիրքը։ Դիցուք, ֆիդայիները հանդիպել են թշնամու հրետանային հրաձգության։ Ինչ է հարկավոր անել նման դեպքերում. չէ որ իրենք ոչ հրետանի ունեն և ոչ էլ որևէ պատրաստություն հրետանային գործում։ Եվ Անդրանիկը խորհուրդ է տալիս. «նախ ուշադրությամբ նայել և հաշվել թե որքան հեռավորություն ունի թնդանոթը։ Երբ ծուխը երևաց՝ սկսեցեք համրել՝ մեկ-երկու և այլն և տեսեք թե քանի՞ կրնե մինչև ռումբի պայթումը։ Եթե օրինակ, համրեցիք տասը, ուրեմն 1000 քայլ հեռու է, եթե 15՝ 1500 քայլ։ Մեկ համրանքը 100 քայլ է։ Երբ հաշվեցիք և տեսաք, թե ձեր զնդակները կարող են հասնել թնդանոթաձիգներուն, այն ատեն խմբապետը թող զատե քանի մը լավ նշանառու զինվորներ և զարնել տա թնդանոթաձիգներունը»[7]։ Եվ պետք է ասել, որ Անդրանիկի այդ մոտավոր հաշվարկումները համապատասխանում էին հրետանադիտության տարրական հիմունքներին։

Խոսելով զինվորների պարտականությունների մասին, Անդրանիկը նրանց համար պարտադիր է համարում հետևյալը։ «1. Խիստ գաղտնապահ ըլլալ. 2. Անպայմանորեն ենթարկվել գործի պահանջած կարգապահության. 3. Վարք ու բարքով մաքուր և անարատ մնալ. 4. Իրարու մեջ սուտ չխոսիլ. 5. Զինվորական խորհրդի գաղտնիքները իմանալու չի հետամտել, բանի որ արդեն ձեզի վերաբերյալ խնդիրները կհայտնեն. 6. Իրարու վիրավորական խոսքեր չըսել։ Եթե պատահի այդպիսի դեպքեր, խռով չի մնալ. 7. Պահապանության ժամա-

6 Անդրանիկ, Մարտական հրահանգներ, Ժնև, 1906։
7 Նույն տեղում։

նակ խիստ զգույշ ըլլալ. չի քնանալ, չերգել, չի ծխել, իրարու հետ բարձր ձայնով չի խոսիլ, լուցկի չվառել, կրակահան չի գարնել. 8. Զենքերն ու փամփուշտները մաքուր պահել» և այլն։ Կանոնագրքում խորհուրդ է տրվում թշնամու խորամանկություններից խուճապի չմատնվել և միշտ ջանալ արագ ու սառնասիրտ որոշում ընդունել։ «Ձեր հետքերուն հետամտելով, թշնամին կուգա հարայ հրոցով և կգոռա.— «Այստեղ են, այստեղ են»։ Բայց սուտ են, դիտմամբ այդպես կրսեն, որ ձեր կողմեն շարժում մը ընեք կամ հրացան բանաք, որ հանկարծակիի չի գան»[8]։ Այդպիսի դեպքում պետք է զգոն լինել և կրակ չբանալ։ Եթե թշնամին ընդհուպ մոտենա, նոր միայն պետք է կրակել և այն էլ առաջին հերթին ձիավորների վրա։

Անդրանիկը խորհուրդ է տալիս շարժվել ոչ թե մեծ խմբերով, այլ բացագատված, փոքրիկ խմբերով, միայն չկորցնելով կապը միմյանց հետ, քննում է ապստամբներին զինելու և մատակարարելու հարցերը։ Խոսելով ֆիդայու անձնական զինվածության մասին, կանոնագիրքը նշում է, որ նրա «ամենակարևոր պիտույքներն են՝ փամփուշտ, վառոդ, գնդակ, կապսուլ, պահեստի պաշար, փամփուշտ լցնելու գործիքներ, ոտնամաններ, գուլպա։ Բայց ձեր տոպրակներեն ուտելիքը ամեն ժամանակ պակաս չընեք։ Ուտելիքին պետք է հավասար նայիք։ Խնձոր մ՚ալ ունենաք, բաժնելու եք։ Իսկ կերակուր կերած ժամանակ՝ բոլոր զինվորները տասնյակ-տասնյակ պիտի նստին և տասնապետներն ալ իրենց տասնյակներուն հետ։ Տասնապետները՝ կերակուրի ժամանակ առանձին պետք չէ, որ նստին»[9]։ Կանոնագրքում մանրամասն տրված են նաև հրացանները քանդելու, մաքրելու և խնամելու կանոնները տարվա տարբեր եղանակներին։ Ուշագրավ են Անդրանիկի ցուցումներն ու խորհուրդները լեռնային վայրերում, սարերում կռվելու կանոնների մասին. «Սար բարձրացած ժամանակ, եթե տեսնես, որ թշնամին ետևդ կտրել է, նստիր ղիրքավոր տեղ մը։ Տասը հոգի, եթե փամփուշտ ունիք, բավական եք 1000 կամ 1500-ին։ Իհարկե պետք է դուք ալ փորձառու ըլլաք և քաջությամբ կռվողներ»[10]։

Այնուհետև նշվում են խմբի մշտական մարտական պատրաստականության, քողարկման, խրամատավորման, պաշտպանության և հարձակման կանոնները։ Ինչպե՞ս գործել ցերեկը, գիշերը, լեռներում, անտառներում, կամուրջներն ու գետերն անցնելիս, բնակավայրերում, քաղաքներում, թշնամու գերակշիռ ուժերի հանդիպելիս և այլն և այլն։ Ցուցումներ են տրվում հիվանդներին օգնություն ցույց տալու կարգի, քաղաքացիական բնակչության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի, պարենի և սպառազենի հայթայթման, պահպանման, օգտագործման և ռազմական կյանքի հետ առնչություն ունեցող համարյա բոլոր հարցերի մասին։

«Մարտական հրահանգներ»-ը հետագայում լրացվում էին Անդրանիկի բազմաթիվ հրամաններով և ցուցումներով։ Կանոնագրքի վերջում Անդրանիկը գրել է. «Վերջացնելով գրքույկը, պարտք կզգամ հայտարարելու, թե ես ոչ զինվորական վարժարանի մը ընթացքը ավարտած եմ, ոչ ալ մասնագիտական ճյուղ մը մշակած, հետևաբար հավակնություն չունիմ մասնագիտական գործ մը ներկայացնելու իմ հայրենակիցներուս. կյանքը ինքն է եղած իր վարձու-

8 Նույն տեղում, էջ 21։
9 Նույն տեղում, էջ 25։
10 Նույն տեղում, էջ 61։

թյուններով իմ, ինչպես նաև իմ շատ մը ընկերներուն դաստիարակը»[11]։ Եվ իսկապես, «Մարտական հրահանգներ»-ը շարադրելիս նա մեծ մասամբ հենում էր պայքարի իր փորձից։ Չնայած շատ հարցերի պարզունակ դրվածքին, այնուամենայնիվ այդ փաստաթուղթը վկայում է Անդրանիկի ռազմական տաղանդի, գործնական ու տեսական պատրաստականության մասին։

1912—1913 թթ. Բալկանյան պատերազմի ժամանակ, ինչպես հայտնի է, Բուլղարիայում ապրող հայերը ևս մասնակցեցին թուրքական զորքերի դեմ մղված կռիվներին՝ կազմակերպելով առանձին կամավորական վաշտ։ Բուլղարական կառավարությունը թույլ տվեց, որպեսզի այդ վաշտը (273 հոգի) ունենա հայկական ազգային դրոշ և սպաները նույնպես ազգությամբ լինեն հայեր։ Վաշտի հրամանատարը Անդրանիկն էր։ Բուլղարական աշխարհազորի պետ գեներալ-մայոր Գենևի և շտաբի պետ մայոր Դրրվինկովի կողմից ստորագրած պաշտոնական № 3463 վկայականից (1913 թ. օգոստոսի 31-ին), ինչպես նաև այլ փաստաթղթերից մենք իմանում ենք հայկական վաշտի քաջագործությունների մասին Բալկանյան պատերազմում։ Այդ վաշտը, ասված է վկայականում, «Թուրքիայի հետ պատերազմի առաջին շրջանում Կրրջալիի ջոկատի կազմի մեջ մտնելով մասնակցել է հետևյալ արշավանքներին. Սոֆիա — Սամոկով — Կոստոնից, Բանյա — Պլովդիվ — Թրոնովո, Սեյմեն — Խասկովո — Կրրջալի — Մաստանլը — Բայամոտճինա — Ֆերե — Սոֆլու — Դիմոտիկա — Ուզուն-Քյոփրու — Քեշան — Մալգարա — Ռոդոստո և հետևյալ մարտերին՝ 1) Մաստանլը —4-ը նոյեմբերի 1912 թ., 2) Ուզուն Համիդլեր —6-ը նոյեմբերի 1912 թ., 3) Բալկան Դերեսի —7-ը նոյեմբերի 1912 թ., 4) Մերհամլի գյուղ — 15-ը նոյեմբերի 1912 թ. (Յավեր փաշայի կորպուսի գերեվարվելը)։

Ամբողջ աշխարհազորի կազմում՝ Թուրքիայի հետ պատերազմի երկրորդ ժամանակաշրջանում հայկական վաշտը ակտիվորեն մասնակցել է հետևյալ մարտերին՝ 1) Մերեֆտե քաղաքի գրավմանը՝ 12-ը հունվարի 1913 թ., 2) Շարքեյ քաղաքի գրավմանը՝ 23-ը հունվարի 1913 թ., Շարքեյի մոտ տաճկական դեսանտի ոչնչացման կռիվներին 1913 թ. հունվարի 26, 27, 28-ին և Շարքեյ — Մալգարա — Քեշան — Իրսալա — Փերե — Դեղեաղաջ — Գյամուրջինա — Դեմիր — Հիսար — Պետրիչ — Ստրումիցա — Ռադովիշչ — Շտիպ — Կոչանե — Սոֆիա արշավանքներին։ Հայկական վաշտը պաշտպանել է Մարմարայի ծովափը 1912 թ. դեկտեմբերի 16-ից մինչև 1913 թ. հունվարի 20-ը և նույն թվականի հունվարի 29-ից մինչև մարտի 22-ը։ Պահակային ծառայություններ կատարում էր Եռանդաղին»[12]։

Վկայականում հիշատակվում է Անդրանիկի բացառիկ քաջությունը, հատկապես 1912 թ. նոյեմբերի 15-ին, երբ նա իր կտրիճներով մեծ հմտությամբ կարողացավ ընդհուպ մոտենալ Յավեր փաշայի կորպուսի հրամանատարական կայանին և օգտագործելով հարմար տեղանքը, դերի վերցրեց Յավեր փաշային։ Այդ ճակատամարտում բուլղարական բանակը դերեց 10000 թուրք զինվոր, 242 սպա, 3 գնդապետ և 1 փաշա[13]։

---

11 Նույն տեղում, էջ 27։

12 Տե՛ս Արմեն Սյունի, Հայկական վաշտը Անդրանիկի առաջնորդությամբ 1912—1913 թթ. Բալկանյան պատերազմում, Բաքու, 1914, էջ 145—147։

13 Նույն տեղում։ Այս բոլորի մասին պաշտոնապես տված է նաև «Բուլկարահայ տարեգիրք Վիթոշ, »Արարատ»-ում, 1935, էջ 192—193, որի թարգմանությունը պահպանվում է Հայկ. ՍՍՌ-ի ՊԿՊԱ-ի № 370 ֆոնդում։

Հատուկ նշելով հայկական վաշտի սխրագործությունները, բուլղարական կառավարությունը բազմաթիվ հայ սպաների, տասնապետների և կամավոր զինվորների պարգևատրել է բարձր մարտական շքանշաններով և այլ պարգևներով։ «Գեղազանց ծառայության համար» Անդրանիկն ստանում է զինվորական կոչում. վաշտի անդամներից 8 հոգու տրվում է կրտսեր ենթասպայի, 16 հոգու՝ ենթրեյտորի աստիճան։

Անդրանիկի անունը Բալկաններում հիշվում էր մի առանձին հարգանքով։ Բուլղարիայի բանակում պայքարելով Թուրքիայի դեմ, նա հավատացած էր, որ Թուրքիայի պարտությունը այդ պատերազմում նպաստավոր նախադրյալներ կստեղծի նաև հայ ժողովրդի ազատագրության համար։

Բժիշկ Արմեն Սյունին, որն այդ օրերին Կ. Պոլսից ժամանել էր Սոֆիա և կամավոր մտել բուլղարական աշխարհազորի մեջ, իր հիշողություններում ամենայն մանրամասնությամբ նկարագրում է այն բուռն ոգևորությունը, որ տիրում էր բուլղարների մեջ, ինչպես նաև բուլղարահայ շրջաններում։ Այդ և այլ աղբյուրներից պարզվում է, որ վաշտի անձնակազմը կռվում էր մեծագույն անձնվիրությամբ, հերոսությամբ, ոգևորությամբ։

Բալկանյան պատերազմն ավարտվելուց հետո Անդրանիկը առանձնանում է իր համեստ բնակատեղիում։ Հոգացավը ուժեղ կերպով զգացնել էր տալիս իրեն։ Նա պետք է բուժվեր, բայց շուտով վրա հասան ծանր փորձություններով լի նոր ժամանակներ... Սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը։ Անդրանիկի ռազմական տաղանդը այդ տարիներին դրսևորվեց նոր ուժով։

Արդեն որոշված էր հայ կամավորական ռազմական ջոկատների կազմակերպման հարցը։ Կովկասյան բանակի հրամանատարությունը ցանկանում էր, որպեսզի հայկական զորամասերի հրամանատարներ, ղեկավարներ նշանակվեն այնպիսի անձնավորություններ, որոնք օժտված լինեին ոչ միայն ռազմական անհրաժեշտ ձիրքով ու փորձով, այլ նաև որոշակի հեղինակություն վայելեին ժողովրդի մեջ։

Այդ տեսակետից Անդրանիկը շատ համապատասխան թեկնածու էր։ Եվ ահա 1914 թ. օգոստոսի 15-ին Կովկասի փոխարքայի ռազմական գծով տեղակալ գեներալ Միշլաևսկին Անդրանիկին հրավիրում է իր մոտ։ Ռուս գեներալը ցանկանում էր անձամբ ծանոթանալ այնքան անուն հանած հայ հերոսի հետ և իմանալ նրա կարծիքը պատերազմական առաջիկա գործողությունները վարելու առանձնահատկությունների մասին։ Աղբյուրները հաստատում են, որ Անդրանիկը շատ լավ տպավորություն է թողել Միշլաևսկու և ներկա եղողների վրա։ Ինքը, Անդրանիկը այդ հանդիպման մասին գրում է. «Ընդարձակ քարտեզ մը ձգված էր մեծ սեղանի մը վրա». «Ի՞նչ է քու գաղափարդ և կարծիքդ։ Ի՞նչ կերպով ռուս զինվորները կրնան դեպի Տաճկաստան առաջանալ», բսավ գեներալ Միշլաևսկին։

«Թույլ տվեք ինձի հարցնելու թե քանի հազար զինվոր պիտի ուղարկեք Թուրքական ճակատը։ Երբ ձեր զինվորներուն քանակը գիտնամ, այն ատեն իմ համեստ կարծիքս կհայտնեմ»։

«80000 զինվորներ» — պատասխանեց Միշլաևսկին։

Ես իմ ցուցմունքներս տվի, որուն համար շատ գոհ մնացին»[14]։

---

14 Տե՛ս «Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը 1914—1917 թթ.», Պոսթոն, 1924, էջ 5—6։

Անդրանիկի ցուցումներից երևում է, որ նա շատ ճիշտ էր կողմնորոշվել կամավորական զորամասերի օգտագործման հնարավոր եղանակների և նպատակների հարցում։ Տեղանքին լավ ծանոթ լինելու և բնակչության լեզուն իմանալու շնորհիվ հայ կամավորներին պետք է առաջին հերթին օգտագործեին որպես հետախույզներ, առաջապահներ, ուղեկցողներ, սակայն ընդհանուր առմամբ նրանք պետք է մտնեին ռուսական զինախմբերի մեջ և ակտիվ կերպով մասնակցեին ընդհանուր մարտական խնդրի կատարմանը։ Անդրանիկը գտնում էր, որ ընդհանուր ստրատեգիական պլանից ելնելով՝ բացառված չեն լինելու նահանջներն ու առաջխաղացումները, զորաշարժերը, հետևապես և հայ բնակչության հնարավոր տեղափոխումները ռազմաճակատային գոտուց դեպի թիկունք. ուստի հայ կամավորները պետք է անհրաժեշտ աջակցություն ցույց տան բնակչությանը, գաղթականությանը դեպի ավելի ապահով վայրեր փոխադրելու գործում։

Կովկասյան բանակի շտաբում Անդրանիկի և գեներալ Միշլաևսկու բանակցությունները կրում էին զուտ ռազմական բնույթ և չէին շոշափում քաղաքական հարցեր։ Այդ հաստատում է նաև ինքը՝ Անդրանիկը։ «Քաղաքական ի՞նչ պայմաններով մերիններս համաձայնության եկած էին, կամ ինչ խոստումներ ստացած էին ռուս պետական գլխքերեն, ինձի համար անծանոթ էր։ Ես չէի կրնար և իրավունք ալ չունեի այդ հարցերուն մոտենալ, ուստի խոսեցա զինվորին համար և պատասխանեցի միմիայն զինվորական հարցումներուն»[15]։

Գեներալ Միշլաևսկին համաձայնվում է հայ կամավորական զորամասերն օգտագործել հետևյալ կերպ՝ առաջին ջոկատը պետք է Պարսկաստանով առաջանա դեպի Բաշկալե և Վան, երկրորդը՝ Իգդիր, Բայազետ, Բերկրի և Վան, երրորդը՝ Կաղզվան, Ալաշկերտ, Մանազկերտ և Բիթլիս, չորրորդը՝ Սարիղամիշ, Գարե, Օրզան, Քյոփրու-Քյոյ և Կարին։

Հայկական կամավորական ջոկատները կազմված էին մեծ մասամբ ոչ կադրային զինվորականներից. դրանք երիտասարդներ էին, ուսանողներ, ուսուցիչներ, գյուղացիներ, որոշ չափով էլ բանվորներ, որոնք տոգորված էին հայրենասիրությամբ, ամբողջովին նվիրված էին ռուսական զենքին և նրա հաղթանակի հետ էին կապում հայ ժողովրդին թուրքական բռնապետության լծից ազատագրելու իրենց հույսերը։ Այդ զորամասերի տրամադրությունը շատ բարձր էր, և նրանք կռվում էին մեծ եռանդով։

Անդրանիկը շատ լավ էր հասկանում, որ առանց անհրաժեշտ մարտական ուսուցման, ներքին կարգապահության ու գործելակերպի միասնության, առանց անհրաժեշտ սպառազինման ու պարենի ապահովման ոչ մի զորամաս չի կարող հույս դնել քիչ թե շատ լուրջ մարտական հաջողությունների վրա։ Եվ նրա առավելություններից մեկն էլ հենց այն էր, որ այդ բոլորը ոչ միայն խոր կերպով գիտակցում էր, այլև միաժամանակ իր արտասովոր գործարարությամբ, եռանդով ու կրքոտությամբ կարողանում էր կազմակերպել, մի ընդհանուր հունի մեջ դնել բոլորի ջանքերը՝ եղած ուժերը նպատակասլաց կերպով օգտագործելու համար։

Իր կամավորական զորամասով Անդրանիկը մասնակցել է Աշնակի (1914 թ. նոյեմբերի 5-ին), Սարայի (նոյեմբերի 19-ին), Մոլլա-Հասանի (նոյեմբերի 28-ին), խանայ Սարայիի մոտի Բարթուղիմեոսի վանքի (1915 թ. մայիսի

15 Նույն տեղում, էջ 6—7։

4-ին), Բաշկալեի (մայիսի 5-ին), Հայոց Ձորի (մայիսի 29-31-ը), Աղթամարի (հունիսի 13-ին), Կարճևանի գավառի (հունիս ամսին), Դատվանի (հունիսի 16—17), Մուշի դաշտի Ալբենիս և Վարդենիս գյուղերի (հուլիսի 12-ին), Արճեշի (հուլիս), Բերկրի-Կալեի, Դիլմանի և այլ ճակատամարտերի, ամենուրեք դրսևորելով իրեն որպես փայլուն հրամանատար։

Մեկ այլ առիթի թողնելով այն բոլոր մարտերի նկարագրությունը, որոնց մասնակցել է Անդրանիկը՝ որպես հայկական կամավորական առաջին զորամասի հրամանատար, այստեղ կանդրադառնանք միայն Դիլմանի ճակատամարտում Անդրանիկի ցուցաբերած հմտությանն ու քաջությանը և առհասարակ նրա զորամասի խաղացած վճռական դերին։ Դիլմանի մարտերը տեղի են ունեցել 1915 թ. ապրիլի 15-ից մինչև մայիսի վերջերը։ Անդրանիկի զորամասը մտնում էր գեներալ-լեյտենանտ Ջերնոզուբովի՝ Դիլմանի և Ուրմիայի շրջանում գործող զորախմբի կազմի մեջ։

Ստամբուլից հապճեպ կերպով դեպի Դիլման փոխադրած թարմ ուժերի միջոցով գերմանա-թուրքական հրամանատարությունը նպատակ ուներ ջախջախել ռուսական բանակի ձախ թևը, առաջին հերթին Ջերնոզուբովի խումբը, շարժվել դեպի Իրանական Ադրբեջան, Ջուլֆա, իսկ այնուհետև՝ Բաքու, Գանձակ, դուրս գալ ռուսական Կովկասյան ռազմաճակատի թիկունքը և օգտագործելով տեղի մահմեդական ռեակցիոն տարրերին, վճռական հաղթանակ ձեռք բերել Ռուսաստանի նկատմամբ, գրավել ամբողջ Կովկասը։ Այսպիսով, տվյալ ժամանակաշրջանում Ջերնոզուբովի զորախմբի հաջողությունից զգալի չափով կախված էր Կովկասյան ռազմաճակատի հետագա բախտը։

Թշնամին ուներ բացարձակ գերակշռություն Ջերնոզուբովի զորքերի նկատմամբ։ Խալիլ բեյը իր 12000-անոց բանակով, մոտ 5000 զինված քրդերի աջակցությամբ, ապրիլի 15-ին անցնում է ակտիվ հարձակման։ Իր կամավորական զորամասով գտնվելով ճակատամասի ամենածանր և վճռական տեղամասում, քանակապես ու զինվածության տեսակետից անբարենպաստ պայմաններում, Անդրանիկը կարողանում է ոգևորել մարտիկներին, ոգեշնչել անձնական օրինակով և սուրը ձեռքին թշնամու տեղատարափ կրակի տակ սուրալ դեպի հակառակորդը, ետևից տանելով իր կտրիճներին։

Պաշտոնական փաստաթղթերը, ինչպես նաև ականատեսների բազմաթիվ վկայությունները հաստատում են Անդրանիկի և նրա ջոկատի վճռական դերը այդ կատաղի ճակատամարտում։ Անդրանիկի վաշտերի հրամանատարները վիրավորվել և շարքից դուրս էին եկել, սակայն դա չխանգարեց, որ զորամասը փայլուն կերպով կատարի իր խնդիրը։ Թշնամին դաշտում թողել էր 700 դիակ։ Հայ կամավորների կորուստն էր՝ 51 վիրավոր և 21 սպանված։ Ջերնոզուբովը գնդապետ Ջինկևիչին ուղարկում է Անդրանիկի մոտ, իր գովեստներն արտահայտելու և իր կողմից նրա ճակատը համբուրելու համար։ Ջերնոզուբովին առանձնապես դուր էր եկել Անդրանիկի այն հայտարարությունը, թե մի զինվոր էլ թեկուզ մնա՝ ինքը չի նահանջելու։

Ռազմական խմբի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ջերնոզուբովը գրել է. «Ես ջոկատի մասին (խոսքը I ջոկատի մասին է, որի հրամանատարը Անդրանիկն էր— Ա. Հ.) կարող եմ խոսել միայն հիացմունքով։ Միշտ գտնվելով առաջավոր զորամասերի հետ, ապահովելով նրանց թևերը, կատարելով դժվարին թևանցուկ երթեր, առաջին իսկ մարտում ջոկատը ցուցաբերեց խիզախություն։ Մեր հաջողությունները Աշնակի մոտ, Բրուշ խորանում, Խանիքա-

յում, Կոթուրում, Մոլլա-Հասանում, Բելինջիկում և Ղարաթելիում զգալի չափով կապված են առաջին հայկական ջոկատի մարտական գործողությունների հետ, որի հրամանատարը Անդրանիկն էր, փորձված զինվորական պետ, մարտի պայմանները հիանալի կերպով ըմբռնող, հաստատակամ, հետևողական, նա միշտ կանգնած է եղել իր ջոկատի գլուխ և կամավորների շրջանում օգտվում էր մեծ հեղինակությամբ։ Ջոկատն Անդրանիկի հրամանատարությամբ մասնակցել է Մուխանջիկի (Դիլմանի) հայտնի ճակատամարտին, որի շնորհիվ Կովկասը փրկվել է թշնամու արշավանքից... Ես ի դեմս Անդրանիկի, միշտ տեսնում էի եռանդուն հայրենասերի, Հայաստանի ազատության համար մարտնչող մարտիկի, խոր կերպով իր հայրենիքը սիրողի»[16]։ Այնուհետև գեներալ-լեյտենանտը Անդրանիկին բնութագրում է որպես մի հրամանատարի, որ իր ենթականերին սիրում է ինչպես իր երեխաներին, բայց միևնույն ժամանակ ցուցաբերում է պահանջկոտություն ու բարձր կարգապահություն։

Մի այլ փաստաթղթում, որն ստորագրված է ռուս կապիտանի կողմից, կարդում ենք. «Չնայած չափազանց ծանր պայմաններին, մարտական շարքերն անմիջապես հարձակման անցան, տալով հսկայական քանակությամբ զոհեր... մարտը տանուլ տալու դեպքում մենք անխուսափելիորեն հարկադրված պետք է լինենք թողնել Պարսկաստանի այն ամբողջ տերիտորիան, որ դրավել էին ռուսական զորքերը։ Անդրանիկը իր թույլ պատրաստված զորամասի գլուխն անցած, անձամբ առաջնորդում էր մարտիկներին, հանդես բերելով ոգու բացառիկ տոկունություն և խելահեղ անվեհերություն։ Ես տեսնում էի, թե ինչպես մի բուռն խիզախներ, հրապուրված իրենց առաջնորդով, դեպի անխուսափելի մահ էին նետվում կարկուտի պես տեղացող շրապնելների և գնդացրային կրակի ահեղ տարափի տակ։

Այդ ճակատամարտում Անդրանիկը մեկն էր այն եզակի զորավարներից, որի ջանքերով հակառակորդից երեք անգամ թույլ իր ջոկատով կարողացավ կանգնեցնել թուրքական լավագույն դիվիզիաներից մեկի կատաղի գրոհը։

Ժամանակը և հետագա ծանր փորձությունները իմ հիշողությունից ջնջեցին Մուխանջիկի փառապանծ գործի մանրամասնությունները, բայց ոչ մի բան չի կարող ստիպել ինձ մոռանալու հայկական ժողովրդական հերոսի կերպարը, որը դեպի անխուսափելի մահ էր առաջնորդում իր մարտիկներին. հանուն հայրենիքի բարօրության ու ջոկատի փրկության»[17]։

Կովկասյան 7-րդ հրաձգային գնդի պոդպորուչիկ Կորոեր հայտնում էր. «1915 թ. ապրիլի 19-ին առավոտյան ժամը 6-ին թուրքերը կատաղի գրոհներ սկսեցին Հայկական զորամասի դեմ, նպատակ ունենալով օղակի մեջ առնել ջոկատը։ Հայկական զորամասի հրամանատար Անդրանիկը ետ մղեց թուրքերի երեք գրոհը և տեսնելով, որ թուրքերը սկսել են շրջանցել 8-րդ գնդի գումարտակներից մեկը, ինքը հարձակման անցավ, ետ շպրտեց թուրքերին և իր նախաձեռնությամբ վերականգնեց այդ գումարտակի նախկին դրությունը։ Հայկական զորամասն Անդրանիկի գլխավորությամբ այնպիսի անօրինակ հերոսություններ էր գործում, որ վեր է ամեն տեսակի գովեստներից։ Զորամասի դիրքերի առջև թափված էին հակառակորդի 187 դիակներ, ես դեռ չեմ հաշվում հեռավորության վրա հրացանի կրակով սպանվածներին»[18]։

16 Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 77, թ. 5։
17 Նույն տեղում, թ. 13։
18 Նույն տեղում, թ. 12։

Գնդապետ Ջբաշվիլին, որն անձամբ մասնակցել է Դիլմանի ճակատամարտին, իր հիշողություններում գրում է. «Անդրանիկի օրինակից ոգեշնչված՝ կամավորները իրենց վարքագծով վեր էին բոլոր գովեստներից։ Նրանցից շատերը ամբողջ հասակով մեկ կանգնում էին խրամատների հողաթմբերի վրա և ինչ-որ բացականչություններ հղում թուրքերի հասցեին։ Ես ստիպված էի կարգադրել, որ նրանք վերջ տան դրան, քանի որ դա կապված էր մարդկային անիմաստ զոհերի հետ։ Ես նկատել էի, որ հայ կամավորները բացարձակապես արհամարհում էին մահը։ Ցերեկվա ժամը 3—5-ին մոտ, ստույգ ժամն ասել չեմ կարող, հեռախոսով գեներալ Նազարբեկովից հրաման ստացա, որի համաձայն Անդրանիկը պետք է անցներ հարձակման և գրավեր Բարչաշլի գյուղը։ Անդրանիկը փայլուն կերպով կատարեց այդ մարտական առաջադրանքը»[19]։ Այնուհետև գնդապետը տալիս է հայկական զորամասի մարտակարգերի նկարագրություն այդ գյուղը գրավելու և թուրքերին ջախջախելու ժամանակ, ընդգծելով Անդրանիկի անձնական հերոսությունը և այն վճռական նշանակությունը, որ ունեցավ Բարչաշլիի գրավումը ընդհանուր ճակատամարտի համար տվյալ պահին։

Նույնպիսի վկայություն է տալիս շտաբս-կապիտան Նեստերովսկին[20]։ Մանրամասն նկարագրելով Բարչաշլիի մարտը, մեկ ուրիշ ականատես՝ շտաբս-կապիտան Ն. Կիսելյովը հիացմունքով վերհիշում է, թե ինչպես մարտի օրհասական պահին «հայ ժողովրդական հերոս Անդրանիկի գլխավորած հայկական զորամասը, մեծ քանակությամբ գերիներ օղակելով, առաջ էր նետվում և ստիպում, որպեսզի Ստամբոլյան գվարդիայի լավագույն գնդերը երերան և թողնեն մարտադաշտը»[21]։

Գեներալ-լեյտենանտ Տրուխինը, որը Վանի շրջանում գործող ռուսական զորքերի խմբի հրամանատարն էր, նկարագրելով իր զորքերի մարտական գործողությունները Վանա լճի հարավային ափերում, հատկապես Զևանի շրջանում (1915 թ. հունիսի 16—17-ը), և Սորփի մոտ (հունիսի 28—29-ը), որտեղ թուրքերը իրենց թվական գերակշռություն ունեցող զորքերով գրոհում էին ռուսական զորքերի վրա, բնութագրում է նաև հայկական առաջին կամավորական զորամասի և նրա հրամանատար Անդրանիկի վարքագիծը մարտի դաշտում։ «Այդ բոլոր մարտերում,— գրում է նա,— հայկական զորամասերը ընդհանրապես, իսկ վերին աստիճանի եռանդուն, քաջարի և անձնվերորեն խիզախ հրամանատար պարոն Անդրանիկի ղեկավարած առաջին զորամասի մարտական գործողությունները՝ առանձնապես վեր էին ամեն տեսակի գովեստներից»[22]։

Կարելի է բազմաթիվ այլ փաստաթղթեր վկայակոչել, որոնցով հաստատվում են Անդրանիկի փայլուն մարտական գործերը առաջին համաշխարհային պատերազմի տարիների Կովկասյան ռազմաճակատում։ Չնայած բոլոր աննրպաստ պայմաններին, հայկական կամավորական զորամասերը, հատկապես Անդրանիկի ղեկավարած գունդը բացառիկ անձնվիրությամբ և քաջությամբ կատարել են իրենց մարտական խնդիրները։ Անդրանիկը այդ ճակատամարտերում ձեռք բերեց ավելի մեծ փորձ, գիտելիքներ և հմտություններ։ Ամենօր-

19 Նույն տեղում, թ. 4։
20 Նույն տեղում։
21 Նույն տեղում, թ. 7։
22 Նույն տեղում, թ. 9։

յա շփումը ռուս գեներալների, սպաների հետ, որոնց մեջ քիչ չէին իսկական հայրենասերները, դրական ազդեցություն էին ունենում նրա վրա։

1917—1919 թթ. Անդրանիկի վարած մարտական գործողությունները տեղի են ունեցել չափազանց բարդ պայմաններում։ Այդ տարիներին Անդրանիկը ծանր ապրումների մեջ էր, որովհետև ծանր, դժնդակ օրեր էր ապրում իր ժողովուրդը։ Անդրանիկը ողջունեց 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, համոզված լինելով, որ այն կնպաստի ժողովուրդների ազատագրմանը, բարյացակամ վերաբերվեց դեպի Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և 1918 թ. Նախիջևանից Ս. Շահումյանին գրած հայտնի նամակով իր պատրաստակամությունը հայտնեց պայքարելու Սովետական Ռուսաստանի գրոշի ներքո։ Նրա մասնակցությունը 1917—19 թթ. ռազմական գործողություններին ռուս-թուրքական ռազմաճակատում և Անդրկովկասում արժանի է հետագա լուրջ ուսումնասիրությունների և գնահատման։

Անկաշառ սերը դեպի իր ժողովուրդը, հոգատարությունը և հարգանքը շարքային զինվորների նկատմամբ, վերջիններիս ոգևորելու փայլուն շնորհը, մարտի կամ ռազմական երթի հետ կապված բոլոր անհրաժեշտ պայմանների, մանրուքների նախատեսումը, ամուր, գիտակցական կարգապահության պահպանումը, կապը ժողովրդի հետ, անկեղծությունը, անբասիրությունը, արտակարգ զսպվածությունը անձնական կյանքում, արագ կողմնորոշվելու բնատուր տաղանդը և վերջապես անձնական քաջությունը լայն ժողովրդականության և համբավի արժանացրին Անդրանիկին։ Ժողովուրդը երգեր է հորինել նրա մասին, բանաստեղծները ու արվեստագետները մեծարել են նրան անվանելով «Լեռնային արծիվ», «Հայկական Գարիբալդի», «Սպարտակ» և այլն։ Թումանյանը հաճախ էր կրկնում Անդրանիկի սիրած խոսքերը. «Երբ իրիկունը գլխներդ բարձին դնեք, որ քնանաք, մի քիչ մտածեցեք ձեր ազգի մասին։ Այնուհետև մտածեցեք ձեր հարևանի մասին, հայ լինի, թուրք լինի, ռուս լինի, վրացի լինի, ով կուզե լինի, և բարի մտածեցեք»[23]։

Անդրանիկին չվիճակվեց անձամբ տեսնել հայ ժողովրդի ազատագրումն ու Սովետական Հայաստանի ծաղկումը։ Սակայն, ապրելով օտար ափերում, նա միշտ էլ հետաքրքրվում էր վերածնված Հայաստանի հաջողություններով և բուռն վերելքով։ Հայաստանի պետական կենտրոնական պատմական արխիվում պահպանվում են հարյուրավոր հավաստի փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս Անդրանիկի ճիշտ մոտեցումը հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ամրապնդման խնդրին, նրա պայքարը դաշնակցության դեմ, նրա ջերմ վերաբերմունքը Սովետական Հայաստանի և իր հարազատ ժողովրդի նկատմամբ։

АНДРАНИК КАК ВОИН И ВОЕНАЧАЛЬНИК

Гвардии полковник А. О. АРУТЮНЯН

(Резюме)

Андраник Озанян, известный в народе под именем «Храбрый Андраник», является одним из выдающихся представителей армянского национально-освободительного движения против турецкого деспотизма.

23 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան, 1959, էջ 225։

Родился он 25 февраля 1865 г. в провинциальном городке Шапин-Гарисаре Западной Армении, в семье ремесленника. Он с детства был очевидцем неслыханного произвола, угнетения, насилий и физического истребления армянского народа, чинимых кровавым султаном Абдул-Гамидом II, что заставляло армян не раз поднимать оружие и оказывать вооруженное сопротивление.

В 1899—1903 гг. Андраник участвовал во многих вооруженных столкновениях с турецкими зафтиями и регулярными войсками на территории Западной Армении. В этих боях он проявил мужество и военный талант. О героических подвигах Андраника и его товарищей сообщалось во всей европейской прессе. Его имя стало легендарным и популярным среди народа.

С 1907 по 1913 г. Андраник проживал в Болгарии. Во время Балканской войны 1912—1913 гг. Андраник участвовал во главе армянской добровольческой роты в ряде сражений с турецкой армией, проявляя доблесть и мужество, за что был награжден болгарскими орденами и получил чин офицера болгарской армии.

В дни первой мировой войны Андраник вернулся в Закавказье и был назначен командиром первой армянской добровольческой дружины, которая в составе отряда генерал-лейтенанта Чернозубова участвовала в известном Дильманском сражении и удостоилась похвал со стороны высшего русского командования. Андраник показал себя героем, опытным командиром и организатором, умеющим быстро оценить обстановку, принять правильное, смелое, решение и мастерски осуществить его. В 1917 г. ему было присвоено воинское звание генерал-майора. После Февральской и Октябрьской революции он продолжал борьбу против турецких войск, стремившихся оккупировать Закавказье и Армению.

Андраник был большим поборником армяно-русской дружбы. В 1918 г., находясь в Нахичевани, Андраник телеграфировал С. Шаумяну, объявляя себя сторонником Советской России.

Находясь во враждебных отношениях с дашнакским правительством, он в мае 1919 г. покинул Армению. Будучи за границей (во Франции, Англии, США), Андраник организовал помощь многим армянским беженцам и сиротам, выступал на многочисленных митингах против врагов Советской Армении, писал статьи и книги, где описал боевые подвиги своих солдат, и т. д.

Умер Андраник в 1927 г. в Калифорнии (США). Похоронен в Париже, на кладбище Пер-Лашез.